

766), այս առթիւ յիշատակութիւն Դաւիթ Մարգարէի թագին, զոր Կոստանդիանոս կ'ընդունի Շապուհէն (761), Տրդատի այցելութիւնը Հոռոմ (էջ 767), Յուլիանոս Ուրացոյի հրամանը Հրէից Երուսաղէմ տաճար կառուցանելու (769—770), Երուսաղէմի Կիւրեղ հայրապետի նահատակութիւնը (էջ 771—772)։ Ս. Պապի Երեւոմը Երուսաղէմ Ս. Կիւրղի օրով (էջ 771—772)։ Ասկէ վերջը կը պատմուի Ս. Նունէի վարքը եւ Պապի կանգնումը (էջ 772—774)։ Ի կատարածին զետեղումն է Եպիփանի վերջաբանը, որ նախնաբար առանց տարակուսի շարունակութիւնն էր էջ 755 «ցօրն վերջին» տողին։

«Բայց եւ ես իրաւունս համարիմ օրինօք ասել, որպէս եւ կանխաւ ասացի<sup>1</sup>, եթէ չէ ոք բաւական ընդ գրով արկանել զհրաշիցն եւ զօրինակացն որ վասն սուրբ Նշանին եղեն եւ լինելոց են ի հանդերձեալսն մեծ եւ ահաւոր գալստեան Որդւոյն Աստուծոյ. որպէս ասէ. Եւ ապա Երեւեցի Նշան որդւոյ մարդոյ յերկինս<sup>2</sup>. Եւ թէ Երեւեցար ի փրկութիւն ժողովրդեան քո ի փրկել զընտրեալս քո<sup>3</sup>։

Եւ արդ, եղբարք, փոքր ի շատէ ըստ խնդրոյ ժառանգիս իմոյ համանունս Եպիփանու բացատրեցի զօրինակացն եւ զեղելոց նշանաց սուրբ Պապին, զոր կատարեցան եւ կատարելոց են յամենայն ժամանակի անուամբն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

Այս ընդմիջարկութիւնները, որոնք մուծուած են հայ գրչէ, աղբիւր կը մանանչեն հետեւեալ գրուածքները.

1. Պատմութիւն Գիւտի Ս. Պապի ի ձեռն Պատրոնիկէ դէտոյի.
2. Պատմութիւն Գիւտի Ս. Պապի ի ձեռն Հեղինէի.
3. Սոկրատայ Պատմութիւն Եկեղեցական.
4. Ազաթանգեղոս.
5. Թուղթ Կիւրղի վասն Երեւման Ս. Պապին.
6. Վկայաբանութիւն Կիրակոս-Կիւրղի Երուսաղէմացւոյ.
7. Մովսէս Պորենացւոյ Պատմութիւն Հայոց.
8. Մովսէս Պորենացւոյ Պատմութիւն Հոբիփսիմեանց.

<sup>1</sup> Կանխարկէ էջն 750:  
<sup>2</sup> Մատթ. Ի. 30:  
<sup>3</sup> Ամբ. Գ. 13. Եւ ի փրկութիւն ժողովրդեան քո փրկել զօրհալս քո:

9. Շապուհ Բագրատունի, Պատմութիւն թագին Դաւիթ Մարգարէի.

10. Ուխտանէս:

Նկատի առնելով այս աղբիւրները կըրնանք գրութեանս խմբագրութեան կանխագոյն եղր գծել Ժ. դարու վերջին քառօրդը:

Ս. Նունէի վարքը համառօտուած է Ս. Պորենացւոյ Բ. 86 գլխէն, կամայական բարեփոխութիւններով: Խմբագրէս հնարուած է Որսի ժամանակ տեղի ունեցած խաւարումի փարատումը լուսաւոր Պապի Երեւոմով:

Այս մասին հայ բնագիրը կը հրատարակեմ ամբողջութեամբ Թ. 11էն (էջ 772—774) առանց փոփոխելու ուղղագրութիւնը:

Ձեռագիրը օրինակուած է Ամասիացի Մահակ վարդապետի 21 յուլիս 1853 կատարած արտագրութենէն, որուն դաղափար օրինակը գրուած էր կ'ըսուի 1350ին (մանրամասնութիւնները տես Հ. Յ. Տաշեան, Յուլիս, էջ 106—107):

(ՎԱՐՔ Ս. ՆՈՒՆԷԻ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս. ԽԱՉԻՆ)

Կին ոմն յընկերաց սրբոյն Հոբիփսիմեանց զնաց փայտեայ առ Վրացիան, անուն նորա Նունի. եւ քարոզեաց նոցա զՔրիստոս Աստուած եւ արար բժշկութիւն բազում հիւանդաց, գլխովին եւ զկին Վրաց առաջնորդին Միրահնայ: Եւ հարցեալ նմա. Ո՞ր անուամբ առնես զմեծամեծ սքանչելիսդ՝ առանց յեղոց բժշկութիւն: Եւ ասէ Նունի. Պապեցելոյն: Եւ նա հիացեալ տայր փառս Աստուծոյ:

Եւ յաւուրսն յայնստիկ ելեալ ի քաղաքն իւր Մծիսեթանոյ Միհրանայ բազմօք ի յորս զբօսանաց. եւ ի մէջօրէի հասեալ ի վերայ նոցա խաւար միգի եւ մառա(խ)դի. եւ եղեւ իրրեւ խոր գիշեր: Եւ զուշով ածեալ Միհրան զհրաշիցն որ առ Տրդատ արքայ, թէ այնպէս զիպեցաւ նմա. եւ հայցէր առ խաչելեալն Յիսուս Քրիստոս օգնել նմա: Երեւեալ ամենեցուն խաչ լուսոյ եւ լուսաւորեցան ամենեքեան. եւ եկին ի քաղաքն իւրեանց Մըծիսիթայ:

Եւ հաւատացեալք ի Քրիստոս Յիսուս: Եւ առաքեաց սուրբն Նունէ առ սուրբ Լուսաւորին Գրիգորիոս Հայոց մեծաց, թէ որպէս արացէ ըստ եղելութեանն: Եւ նա հրաման ետ կործանել զկուռսն եւ ի պատշաճ տեղով խաչ կանգնել տէրունական, մինչեւ

տացէ ձեզ Տէր Հովիւս առ ի հաստատել զձեզ ի հաւատսն Քրիստոսի:

Եւ նա իսկոյն կործանեաց զպատկերան Արամազդայ, որ կայր յայնկոյս գետոյն: Եւ ամենայն քաղաքն ի տանեաց իւրեանց երկըրպազէին նմա: Եւ ապա ասեն ամենայն քաղաքն. Յուլիս մեզ փութանակի, եթէ փոխանակ Արամազդայ ո՞ր երկըրպազեմք: Եւ անդէն ի բարձրաբլուրն որ կայր ընդ արեւելս կոյս քաղաքին Մծիսիթայ, տեղի վայելուչ՝ կանգնեաց խաչ լուկ փայտեայ. եւ երկըրպազեցին: Եւ ոմանց մօտոյ զնացեալ՝ զայթազղէին եւ ասէին. Ամենայն ծառք անտառի նոյնպէս ձեւանան:

Եւ իսկոյն Աստուած, որ Կամի զամենայն մարդիկ զի կեցցեն եւ ի զիտութիւն ճշմարտութեան եկեացեն<sup>4</sup>, ճառագայթեալ պայտուսեան եկեացեն<sup>4</sup>, ճառագայթեալ զլեան առ ծառացոյց աստուածային լուսովը զլեան առ հասարակ եւ հոռ անոյշ լցոյց զվայրսն ամենայն եւ զքաղաքն. եւ ձայն արկեալ զօրաց երկնաւորացն քաղցրաբան երգով սաղմուիւք եւ օրհնութեամբ: Եւ ամենայն ուրեք երեւեալ լոյս խաչանման: Եւ խաչն որ կանգնեցաւ՝ առաւել եւս պայծառաղարը փայլէր նեցաւ՝ առաւել եւս պայծառաղարը փայլէր քան զարեգակն երկոտասան աստեղակերպ ճառագայթիւք հրացայտ՝ առնելով հիւանձառագայթիւք անդ՝ առողջանալ առժաղաց որ զիպեցան ժամ որ խնդրեն հաւամայն, եւ յամենայն ժամ որ խնդրեն հաւամով. ըստ այնմ որ ասէ. Լերինք եւ բլուրք կայտոսեցեն յընդունել զձեզ եւ ծառք ծափս հարցեն ոտտեալք իւրեանց<sup>5</sup>:

Եւ առաքելուհին Նունի ուրախացեալ յոյժ՝ յանձն արար զնոսա Յիսուսի Քրիստոսի եւ սուրբ Պապին յոր հաւատացին, եւ ինքն առաջնորդեալ սուրբ Պապին զնաց քաղաքն զՅիսուս քրիստոս. սկսեալ ի Կղարջից լոռը զՅիսուս քրիստոս. սկսեալ ի Կղարջից լոռը զնա զրամբն Ալանաց եւ Կաղբից մինչեւ ի առ համան Մազթթաց. որպէս ուսուցանէ ատենադպիրն Ազաթանգեղոս:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

**ԵՓՐԵՏԻ ՍԵՉՄԵՆԵԳԼՈՒԹԵԼ ՊՈՄՊԵՈՍԻ ԺԵՄԵՆՈՎԷՆ ՄԻՆՉԵԻ ԸՐԸՐՑՑԻՈՑ ԸՅԹԸՐՀԵԿԸՆՈՒԹԻՒՆԸ**

ԳՈՐԾ ՎԻԿՏՈՐ ՇԱՊՈՑԻ  
 (Շարունակութիւն):  
 ՄԱՍՆ Ա.  
 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿՆ ԵՒ ԱԶԳԱԳՐԱԿՆ  
 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻԲՆԵՐ  
 ԳԼՈՒԽ Ե.  
 Երկիրն ու Բնակիչները:

**§ 1. Ընդհանուր տեսութիւն մ'աշխարհին:**

Ընդհանուր գծերով միայն կ'ուզեմ յիշատակել աշխարհագրական գլխաւոր նկարագրիչներն այլեւայլ գօտիներուն, որոնք մատենիս մէջ քննութեան առնուած խնդրոյն հետ կապ ունին:

Կովկասի լեռնաշղթային ստորոտը հարաւակողմը կը տարածուի երկայն տափարակ մը, որուն մէջ՝ իրարու հակադարձ՝ կը հոսին Կուր (հնոց Կիւրոս կոչածը) եւ Ռիոն (հնոց՝ Մասիս) գետերը: Այս հովտին եւ Միջագետաց դաշտավայրին մէջտեղ լեռնակղզւոյ մը պէս կը բարձրանայ հայկական սահման լեռնաշխարհը<sup>1</sup>. Եւ բաղկացած է բազմաթիւ լեռնաղաշտերէ՝ պէսպէս բար-

<sup>1</sup> Հմմտ. H. F. B. Lynch, Armenia, Travels and studies, London 1901, Հար. Ա. Ռուսական գաւառները: Հար. Բ. Տաճկական գաւառները: — Կայտնաւորեցաւ յիշատակներ են ստոնք, եւ նաեւ Հայաստանի իւր ամբողջ ընդարձակութեամբ չեն բովանդակեց. բայց հոս կը գտնենք՝ բաց ի լուսանկարչական տեսարաններէ (երբեմն քիչ մը շատ փափկադիմ)՝ նաեւ երկու գլուխներ ընդհանուր աշխարհագրութեան ամենանոր գրութեանց համեմատ (Ա., էջ 421 եւն. ամենանոր գրութեանց համեմատ մը մանրապատ., էջ 383 եւն). ընդհանուր քարտէս մը մանրապատում եւ վերջապէս շատ կատարեալ մտտնադիտութիւն մը (Բ., էջ 471 եւն), որ ամէն նախորդ երկերը մինչեւ 1901 կը պարունակէ (հմմտ. նաեւ Simon, Die katholische Kirche in Armenien, Freiburg 1903): Գծախարհար Լինչ գրեթէ չէ գրած հին պատմական աշխարհագրութեամբ: Հայ լեռնաշխարհին մէջ մասը՝ զէպ ի վերին եփրատ՝ ճամբորդած է՝ զնդապետ P. H. Massy, Exploration in Asiatic Turkey, 1896 to 1903 (լոյս տեսած՝ ի „Geograph. Journ.“ XXVI, 1905, II, p. 272—307): Երկրին լեռնադրական ուսումնասիրութիւնն աւելի լրացուց Gustav W. von Zahn, Die Stellung Armeniens im Gebirgsbau von Vorderasien unter besonderer Berücksichtigung der türkischen Teile, Berlin 1906 (Veröffentl. d. Institutes für Meereskunde, Heft 10). տես հոս Տիտ. Բ.՝ լեռնաշխարհը ունի ուղղութիւնները:

<sup>4</sup> Ա. Տիմ. Բ. 4:  
<sup>5</sup> Եւ. Մե. 12:





§ 3. Սահմանագուռայն բնակիչները :

Այն ազգերը՝ որոնք Կաւկասէն մինչև Հրէաստան կը տարածուէին կամ իրարու կը խառնուէին, մեր հետաքրքրութիւնը կը դարձնուէր Երկու տեսակէտով. Հոռոմ եւ Բիւզանդիոն ասոնց քով փոխնիփոխ մերթ իբր թշնամիներ եւ մերթ իբր օգնականներ կը դռնէին. ուստի աւելորդ է գիտնալ ինչ որ ասոնց մասին մեզի աւանդուած է : Այս տեղեկութիւնները հատուկօրէն են, դունաւորուած կողմնակալութեամբ, եւ կասկածելի են թէ զրոյցներու կը վստահին՝ երբ ազգային հեղինակներէ կը բղխին — մանաւանդ Հայաստանի համար, — եւ կամ թէ նեղ ու դժուար տեսութիւն մը կ'արտայայտեն՝ երբ Բիւզանդացիներէն կը ծագին : Տեղեկութիւններս կը սկսին ծաւալիլ միայն Հասարակապետութեան վերջը, Արեւելքի պատերազմներուն առթիւ : Յաճախ բաւական ալ չեն որ կարենանք ցեղերու տեղերը ճշգրտօրէն սահմանել, եւ կը ցուցնեն թէ անոնց յորջորջանքները փոփոխութիւններ կրած են :

Սակայն եւ այնպէս գրեթէ միշտ միեւնոյն ազգերն են, զորոնք կը գտնենք Ա. դարէն Ն. Ք. սկսեալ մինչև մահմետական աշխարհակալութիւնը : Վերք, Աղուանք, Հայք, Հրեայք եւ Արարացիք են որ այս պատմութեան եօթը դարերը կը շահագրգռեն, եւ որովհետեւ ասոնք առանց էական փոփոխութեանց պահած են իրենց ազգագրական նկարագրաց մեծագոյն մասը, կրնանք մի առ մի աչքէ անցնել՝ առանց վտանգի տարածամանակութեանց :

Կաւկասի եւ Հայաստանի մէջ կը տարածուի աշխարհ մը, որ այսօր՝ առաջին տեսութեամբ՝ աշխարհ կ'երեւայ թէ որոշ միութիւն մ'ունի, յորմէ հետէ ուստական տիրապետութիւնը զինքը լիովին գրաւած է : Յաջորդաբար ձգձգուած Արեւելքի եւ Արեւմուտքի մէջ՝ կը պարունակէր բազմաթիւ գաւառներ եւ զանազան ազգեր : Վրաստան, որ բերրի երկիր մըն էր, առատօրէն ոռոգուած եւ շատ բազմամարդ, հաղորդակցութեան ճամբաներ չունէր. իւր տեղագրութիւնը՝ Հայաստանէն աւելի նուազ փետեկտած, այնու ամենայնիւ զինքը կ'անջատէր տուրեւառիկ երթեւեկութեան մեծ պողոտաներէն, եւ ասով կ'ապահովընէր զինքը պա-

տառ պատառ ըլլալէն<sup>27</sup> : Այն զանազան ցեղերը, որ հոն կ'ապրէին եւ որոնք Կաւկասի բարբարոսաց հինահարութեանց ենթակայ էին, ի սկզբան անդ ոգորման մէջ էին նաեւ Հայոց հետ, որոնց գերելիսանութեան ներքեւ ինկան եւ որոնք բռնաբար կը տիրէին : Այս գրութիւնը<sup>28</sup> շարունակուեցաւ իբր վաթսուն տարի, մինչև իբր 55 տարին Յ. Ք. : Միեւնոյն ատեն հոռոմէական ազդեցութիւնը սպրդած մտած էր արեւմտեան մասին մէջ<sup>29</sup>, մինչդեռ Պարսիկներն ալ՝ Ատրպատականէն դալով՝ ներս կը թափանցէին միւս ծայրէն : Երկիրը երբեք այս երկու հակառակորդաց մէկուն կամ միւսին միահամուռ ամբողջութեամբ չհպատակեցաւ<sup>30</sup>, բայց բաժանման գիծը գրեթէ միշտ երբեք ու անորոշ բան մըն էր :

Այս աշխարհի մէջ արեւմտքէն արեւելք կարգաւ կը գտնուէին ազգերս՝ Կողքիսացիք, Վերք եւ Աղուանք :

Առաջինները կ'երեւայ թէ կը բնակէին զլիսաւորաբար Սեւ ծովու եզերքը՝ Դիոսկուրիասի եւ Ապսարոսի մէջտեղ. հոս կը դնեն ասոնց տեղը՝ Սիւրաբս եւ անկէ ետքը — թերեւս անոր հետեւելով — Ստարաոն, Պոմպոնիոս Մելա, Պլինիոս եւ Պտղոմէոս : Միայն Առիանոս (իւր «Շրջանաւորութիւն» երկին մէջ) Կողքիսի անունը կը տարածէ մինչև Տրապիզոնի կողմերը : Հոռոմէացիք շատ երկար ժամանակ այս ծովակողմերը կը պահէին միայն ծովային կայաններ եւ քանի մ'ամբողջներ : Ասոնց բարձրը պարզ էին եւ կ'ապրէին զլիսաւորաբար սեւ ցորենով, կը մշակէին բերրի հող մը եւ հաւանօրէն պաճարաբուծութեամբ ալ կը զբաղէին, որովհետեւ Առիանոս ասոնց ցեղերուն մէջ՝ որոնց բաժնուած էր ժողովուրդը, կը յիշէ նաեւ *Ἰνδοχοι* (կառավարք, կառապանք) ցեղ

<sup>27</sup> Անդրկաւկասի մէջ մզուած պատերազմներու պատմութեանց մէջ յաճախ կը յիշուի ճամբաներու դժուարութիւնը. տես Պրոկոպիոս, Պարզմ. Պրս., Ա, 12, 12 եւն :

<sup>28</sup> Այս ամբաստանութիւնը կ'ընեն միայն բնիկ հեղինակները. հմտ. Brosset, Hist. de la Géorgie etc., trad. du géorgien. St. Pétersbourg, I (1849), p. 53 ff., եւ ասոր՝ Additions et éclaircissements, 1851, p. 81 ff.

<sup>29</sup> Մեզի ծանօթ է 3000 հոռոմացի զօրաց պահապառու մը, որ հոն գետեղուած էր (Յովսէպոս, Պարզմ. Հր., Բ, 367) :

<sup>30</sup> Եւ ո՛չ իսկ Լազաւոստանի պատերազմի տարիներուն՝ Յուստինիանու ատեն, որովհետեւ միշտ հոռոմէական բանակ մը հոն բանակած էր, նոյնպէս երբ Պարսիկները Պեթրան կը գրաւէին :

մը<sup>31</sup> : Կը յիշատակէ նաեւ Լազերը<sup>32</sup>, որոնք ընդհանրապէս Փասիսի հիւսիսակողմը հաստատուած էին, եւ որոնց անունը ի վերջոյ տաւուած էին, եւ որոնց անունը ի վերջոյ սկսաւ գործածուիլ Կողքիսի բոլոր բնակիչներուն համար<sup>33</sup> : Իրենց մայրաքաղաքն էր Արքէոպոլիս՝ սեպուղիղ ապառաժի մը վրայ շինուած յիշեալ գետին ալը<sup>34</sup> :

Ասոնց արքայն քրիստոնէութեան դարձաւ միայն Յուստինիանու օրով<sup>35</sup>, եւ սակայն Բիւզանդիոնի հետ գործունեայ յարաբերութիւններ ունէր, որոնց կը վերագրէին այս իրիզախ ու սէզ ազգին բարձր քաղաքապետութիւնն ու բարգաւաճումը<sup>36</sup> : Կայ-կըթութիւնն ու բարգաւաճումը սերմէ կ'առնուր իւր արքունի իշխանութիւնը. իւր հպատակներն՝ որ ազատ էին մէջն հարկերէ եւ զինուորական պարտաւճիւնէ, կը զիմարէին զլիսաւորաբար Հորութեանց, կը զիմարէին զլիսաւորաբար Հոնաց չուին դէմ :

Ծովով վաճառականութիւն կ'ընէին Պոնտոսի հետ՝ կաշեղէններ ու գերիներ փոխատուելով աղի ու ցորենի փոխարէն<sup>37</sup> : Զ. դանակելով աղի ու ցորենի փոխարէն կեղեքումըն բիւզանդիոնի թոյլատրած կեղեքումները ժամանակ մը վարանցուցին ժողովուրդս թէ որուն նախամեծարութիւն ընդմուտ էր. բայց քրիստոնէական կրօնքը կ'արգիլէր իրեն տեւական համակրութիւն մ'ունենալ Պարսկաստանի հանդէպ<sup>38</sup> :

Բազմաթիւ երկրորդական ազգերուն մէջ՝ որոնք աւելի կամ նուազ չափով Լազերէն կախուած էին, բազմաթիւ անուններ կը յիշեն Պրոկոպիոս եւ Ագաթիաս<sup>39</sup>, յաճախ մէկէն միւսն արդէն այլակերպած ձևերով, Ապսարք, Աթինացիք, Բրուգացիք, Սագիդք, Ապսարք, Աթինացիք, Մոսկացիք, Միսիսիացիք : Այս Ապսիւացիք, Մոսկացիք, Միսիսիացիք անուանակները կը շարունակեն պարզ անուանակներն եւ տարտամ նկարագրունակներն աւելցնելով, ուր կը յիշեն կարթիւններ աւելցնելով, ուր կը յիշեն կարթիւններ աւելցնելով, հոսանք-գաւ ընդարձակ ամայութիւններ, հոսանք-

<sup>31</sup> Յու. Յովսէպոս, անդ. : <sup>32</sup> Աւշօի՝ Պտղոմ., Ե, 9, 4. Աւշօի՝ Պրոկոպ., Պարզմ. Պրս., Բ, 15, 1—2. Պարզմ. Գոթ., Դ, 1, 8 եւ 10. Lazi՝ Պլինիոս, Բն. Պոմ., 2, 2, 12. Յարթաւ, Իբք Գէթ. 88 : <sup>33</sup> Պրոկոպ., Պարզմ. Պրս., Բ, 17, 1—2 : Երկու անուններս ալ իրարու տեղ խառն կը գործածէ եւ կ'աւելցնէ թէ Լազ նոր անունն է (Պարզմ. Գոթ., Դ, 1, 8. Պարզմ. Պրս., Ա, 11, 28). Ագաթիաս (Բ, 9, 2). նոյնպէս կը միացնէ Երկուքն ալ : <sup>34</sup> Պրոկոպ., Պարզմ. Պրս., Դ, 14, 1—3. Ագաթի, 5—8, 17 : <sup>35</sup> Մաղաղաս, Ժէ, էջ 440 (Բն.) : <sup>36</sup> Ագաթիաս, Գ, 3, 2 : <sup>37</sup> Պրոկոպ., Պարզմ. Պրս., Բ, 15, 5 : <sup>38</sup> Անդ, Բ, 15, 28, 26. Ագաթի, Գ, 5 : <sup>39</sup> Պրոկոպ., Պարզմ. Գոթ., Դ, 1, 8 ff. 2՝ յաճախ. Ագաթի, Գ, 7, 2 :

ներ, եւ անտառներ, գահալէժներ, անձառնելի լեռներ եւ քաջաբեր գաւառներ, իւրաքանչիւր ազգի համար ըսելով թէ նախընթացին «անդին» կը բնակի : Լազիտանի հարաւարեւելեան մասին մէջ կը բնակէին, ճանապարհը, որոնց վրայ Բիւզանդիոն անխոհեմաբար փորձեց ուղղակի գերելիսանութիւն մը հաստատել՝ առանց Լազերու միջնորդութեան<sup>40</sup> :

Դէպ ի աւելի արեւելք՝ արդի Վրաստանի մէջ կը բնակէին Վերք<sup>41</sup>. իրենց կալուածքները կը սկսէին Մարապանի լեռնանցքէն՝ որ կուրի հովտէն կը տանի Ռիոնի հովիտը : Պէտք ենք հաւատալ թէ ասոնք, թէպէտ եւ ծովէն հեռու էին, շատ աւելի քաղաքակիրթ էին քան Կողքիսացիքն, հետեւութեամբ հոռոմէական ազդեցութեան՝ որ Տրապիզոնէ սկսեալ մինչև Յուստինոս՝ աւելի իրական սկսեալ մինչև Յուստինոս թէ իրենց երկիրը էր հոն : Կաւկասի ինչ իրենց քաղաքակիրթ, որ քաջաբեր էր ցորենի, ձիթոյ եւ գինոյ, որ շատ բազմամարդ էր<sup>42</sup>, որ կը մեկնուի կլիմային առողջութեամբ<sup>43</sup> : Այլեւայլ տառապարտութիւններ ունէին՝ ազատք (աղնուկանք), քահանայք, զինուորք, գերիք<sup>44</sup> : Ե. դարէն ետքը պարսիկ ազդեցութիւնը գերելիսոզ եղաւ իրենց մէջ<sup>45</sup> :

(Շարունակութիւն :)

<sup>40</sup> Պրոկոպ., Պարզմ. Պրս., Ա, 15, 19—25. Բ, 3, 39. ասոնք Հայոց դրացի են՝ կ'ըսէ (Շին., Գ, 6, էջ 257—258). ուրիշ տեղ մը կը գրէ (անդ, Գ, էջ 260) «Տրապիզոն անդր բան դժան» : Ակնհերեւ է որ ակնարկուած երկիրս հայկական լեռնաշխարհին արեւմտեան մէկ մասն է : <sup>41</sup> Ստրաբոն, ԺԱ, 2, 18 եւն, էջ 499 C եւն. Պտղոմէոս, Ե, 10. Պլինիոս, Բն. Պոմ., 2, 12, 29. Եւստրապիոս, Ե, 14. Ագաթիաս, Պոմ. Եկեղ., Բ, 7. Սահարտ, Պոմ. Եկեղ., Ա, 26 : <sup>42</sup> Ագաթիաս (անդ) կ'ըսէ թէ շատ բազմամարդ է շատ պատերազմաւոր ազգ մըն էր : <sup>43</sup> Բաւական կանուխէն քրիստոնէութեան դարձաւ, հաւանօրէն իբր 324—325 տարին. տես A. P. a l-mieri, La chiesa Georgiana e le sue origini (ի „Bessarione“, IX, 1900, p. 433—457; 2 sér., VI, 1901—1902, p. 218—228, 397—403; II, 188—204, 233—234). — նոյն „La conversione ufficiale degl'Iberi al christianismo, saggio storico (ի degl'Iberi al christianismo, saggio storico (ի Oriens Christianus“, II, 1902, p. 130—150; III, 1903, p. 148—172). <sup>44</sup> Ստրաբոն, ԺԱ, 3, 6, էջ 501 C : <sup>45</sup> Պրոկոպիոս Պ. Պ., Ա, 10 :